

## ԱՍԱՏՐՅԱՆ ՈՌԻՉԱՆ

\*\*\*

Մասիսն ամպել է նորից,  
Պսակը հին է:  
Որդան կարմիրը հիմա  
Կրակի գին է:

Պսակը՝ հին, լեռը՝ հին,  
Երազանքը՝ նոր,  
Ա՛խ, այդ որդան կարմիրից  
Լիներ ինձ մի շոր:

Երկու լեռան արանքում  
Կապեի կամար,  
Կամարի տակ դեռ քնով  
Անտառն արթնանար:

Որդան կարմիրը վաղուց  
Կրակի գին է,  
Մասիսն ամպել է նորից,  
Պսակը հին է:

ԱՐՄԱՏԻ ՎՐԱ ԿՐԱԿ ՉԵՆ ՎԱՌՈՒՄ  
(Յոկտեմբերի 27)

Մահվան տեսիլն է շրջում նենգ ու լուռ,  
Այն ինչ արել է՝ իրեն է հայտնի,  
Միտքը խռոված ընկել դռնեդուռ,  
Տեղ է որոնում իր համար գաղտնի:  
Տխրության քամին մեղքեր է քանում,  
Օրը գերին է հին մոլորության,  
Ազգը ափ տված արցունք է խմում՝  
Հին խարազանի ու նոր պատմության:  
Ինքն իր խայթոցից կրկին դիվահար,  
Չարմանք է կտրել սին պատրանքներից,  
Եվ գորշության մեջ այս բիրտ ու անկար,  
Կեղծիքն է փախչում հարազատ մորից:  
Եվ մանուկները անմար խենթության,  
Հերթ չպահելով առաջ են ընկնում,  
Ընկնում են նրանք հանուն փրկության  
Ու լույս աստղերի ճամփան են փնտրում:  
Թատերաբեմ է: Խնդալու: Լալու:  
Ո՞վ է ասելու մեր լացին ողջույն,  
Այս հողի վրա անձրև է գալու,  
Իսկ մանուկները չունեն հանգիստ քուն:

Որտեղ թաքցնեն ես այս խենթերին...  
Որ չդարձնենք ձեր արյան գերին,  
Արմատի վրա կրակ մի վառեք,–  
Ի՞նչ պատասխան տամ Արարատներին: